Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ քաղաքում գտնվող 06-006-0491-0001 կադաստրային ծածկագրով 0,068 հեկտար մակերեսով հողամասի վրա 2005 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, ձեղնահարկի, բաց պատշգամբի և 2006 թվականին ինքնակամ կառուցված հավանոցի, ցախանոցի ու պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15112023-06-0050 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026U9CVLB, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Թամար Սամվելի Աֆրիկյանի (ծնված՝21.11.1964թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0491-0001 կադաստրային ծածկագրով 0,068 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 90,25 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 13,33 քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկը, 7,33 քառակուսի մետր մակերեսով բաց

պատշգամբը, 11,40 քառակուսի մետր մակերեսով հավանոցը, 2,0 քառակուսի մետր մակերեսով ցախանոցը և 5,12 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Թամար Սամվելի Աֆրիկյանի սեփականության իրավունքը:

4. Թամար Սամվելի Աֆրիկյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 266 140.84 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026 թ. № 1196

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԹԻՎ 955 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով՝ հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026RDW9YW, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» անհատ ձեռնարկատերի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 14-ի «06-096-0003-0026 կադաստրային ծածկագրով 0,277 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու, անշարժ գույքի հատակագիծը հաստատելու մասին» թիվ 955 որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ.

1) Որոշման նախաբանում «13-րդ կետի» թվից և բառից հետո ավելացնել « «ա» և » տառերը և կետադրական նշանները, «աստիճանահարթակի» բառից հետո ավելացնել «նկուղի, բնակելի տան» բառերը, իսկ որոշման 1-ին կետում գրված «կառուցված» բառից հետո ավելացնել «68,20 քառակուսի մետր մակերեսով նկուղը, 27,70 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 95,0 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը,» թվերը և բառերը:

2) Որոշման նախաբանում գրված «անասնաշենքի» բառը փոխարինել «անասնաշենքերի» բառով, իսկ 5-րդ կետի 1-ին ենթակետում գրված «9638.18» թիվը փոխարինել «69320,96» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«14» հոկտեմբերի 2026թ. № 1197 Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին, 2.1-ին մասերով և ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 9-րդ կետով՝ ***որոշում եմ***.

1. Սահմանել Լոռու մարզի Սպիտակ համայնքում տեղամասային կենտրոններն ըստ բնակավայրերի՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանված տեղամասային կենտրոնների մասին տեղեկացնել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության Սպիտակի բաժնին, թիվ 22 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026 թվականի N 1198

ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 69-րդ կետով, հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 13-ին անցկացված մրցույթի մասնակիցներից Մարինե Գալստյանի կողմից ներկայացված գրավոր բողոքը՝ Մարինե Արզումանի Գալստյանի մրցույթի արդյունքների մասով՝ որոշում եմ՝

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 13-ին անցկացված մրցույթի մրցութային հանձնաժողովի «Կոնկրետ մասնակցին մրցույթում հաղթող չճանաչելու մասին» թիվ 2 որոշումը բողոքարկելու մասին Մարինե Գալստյանի կողմից ներկայացված գրավոր բողոքի քննության օր նշանակել 2026 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը 15.00-ին:
2. Աշխատակազմի ղեկավար Ա. Ֆրանգյանին՝ մասնակցել բողոքի քննությանը:
3. Աշխատակազմի ղեկավար Ա. Ֆրանգյանին՝ բողոքի քննության օրվա մասին ծանուցել հանձնաժողովի անդամներին և Մարինե Արզումանի Գալստյանին:
4. Լիազորել աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Թ. Շուշանյանին՝ արձանագրել բողոքի քննության ընթացքը:
5. Կասեցնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 13-ին անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձին այդ պաշտոնում նշանակելու ընթացակարգը՝ մինչև բողոքի քննության արդյունքում համայնքի ղեկավարի կայացրած որոշման ուժի մեջ մտնելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1199

ՌԱՖԻԿ ՌՈՒԲԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռաֆիկ Ռուբիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Այգեստան թաղամաս 2/2 ավտոտեխսպասարկման կետ» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0244-0013 կադաստրային ծածկագրով 0,01855 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամասի 1-ին փողոց 4/1 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0244-0014 կադաստրային ծածկագրով 0,01853 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18092026-06-0062 վկայականը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 179-Ա որոշումը, Ռաֆիկ Ռուբիկի Ղազարյանի դիմումը՝

որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամասի 1-ին փողոց 4/1 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0244-0014 կադաստրային ծածկագրով 0,01853 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով՝ 226 251,30 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքով, որպես սեփականություն օտարել Ռաֆիկ Ռուբիկի Ղազարյանին (ծնված 20/10/1977թ):

2. Ռաֆիկ Ռուբիկի Ղազարյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Ռաֆիկ Ռուբիկի Ղազարյանից հետ գանձել միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1200

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-098-0095-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.239 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 3-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է գրանցամատյանում 1643), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06202FPG3ARB) և Վաչագան Կառլոսի Գասպարյանի (ծնված՝ 10.09.1958թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում գտնվող 06-098-0095-0025 կադաստրային ծածկագրով 0,239 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Սարամեջ, 11-րդ փողոց, 16 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1824):

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1201

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0008-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,176 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի մայիսի 5-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում թիվ 1053), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011HWD7JXG) և Մարինե Կոլյայի Շիրոյանի (ծնված՝ 15.04.1972 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0008-0019 կադաստրային ծածկագրով 0,176 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ս. Ավետիսյան փողոց, 11-րդ նրբանցք, 14/1 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1202

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0304-0081 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,058 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2089643 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011BKCK2FD) և Արթուր Գևորգի Դավոյանի (ծնված՝ 03.11.1968թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0304-0081 կադաստրային ծածկագրով 0,058 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք Սպիտակ ք., Ք. Քըրքորյան փողոց, 3-րդ փակուղի, 4 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1203

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-087-0025-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,205 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2026 թվականի մայիսի 18-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (գրանցված են սեղանամատյանում թիվ 1169, թիվ 1170), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06162WZLJBDA) և Հովհաննես Սարիբեկի Եղիազարյանի (ծնված՝ 13.01.1969թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0025-0019 կադաստրային ծածկագրով 0,205 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 104,7 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 74 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքի, 24,8 քառակուսի մետր մակերեսով հացատանը տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Շիրակամուտ, Արցախի փողոց, 68 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1820):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1204

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0304-0080 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,074 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2089642 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011NHRW2BR) և Սերյոժա Սուրենի Մամյանի (ծնված՝ 20.03.1985 թ.) դիմումը՝

որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0304-0080 կադաստրային ծածկագրով 0,074 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 32,8 քառակուսի մետր մակերեսով գոմին և 10,15 քառակուսի մետր մակերսով մառանին տրամադրել «Սպիտակ համայնք Սպիտակ ք., Ք. Քըրքորյան փողոց, 3-րդ փակուղի, 2 անասնաշենք» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026 թ. № 1205

«ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ ՉԱՎԱՐՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի 2026 թվականի հոկտեմբերի 13-ի զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1. «ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2026 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել «ՄՈՆՈԼԻՏ ՍՊԻՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026 թ. № 1206

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0572-0011 ԵՎ 06-006-0572-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ 0,24186 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 06-006-0572-0011 և 06-006-0572-0012 կադաստրային ծածկագրերով 0,24186 հեկտար մակերեսով 2-րդ կարգի ջրովի վարելահող հողատեսքի հողամասերի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026 թ. № 1207

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0430-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,14106 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 06-006-0430-0002 կադաստրային ծածկագրով 0,14106 հեկտար մակերեսով 2-րդ կարգի ջրովի վարելահող հողատեսքի հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1208

«ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 146-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 13-րդ ենթակետի «ա» պարբերության, հիմք ընդունելով «ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2026 թվականի հոկտեմբերի 7-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66907118) տալ «ՀՀ Լոռու մարզ ք. Սպիտակ Երևանյան խճուղի 42 ավտոտեխսպասարկման կետ» հասցեում 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1209

«ՍԱՀԱԿՅԱՆՍ ԲԵՅՔԵՐԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, համաձայն «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 146-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 16-րդ ենթակետի «դ» պարբերության, հիմք ընդունելով «ՍԱՀԱԿՅԱՆՍ ԲԵՅՔԵՐԻ» ՍՊԸ-ի 2026 թվականի հոկտեմբերի 9-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍԱՀԱԿՅԱՆՍ ԲԵՅՔԵՐԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06982802) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Թորոսյան փ. 6/7» հասցեում գտնվող շինության վրա 1,1 քմ չափերով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ համաձայն էսքիզի, 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1210

«ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 146-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2026 թվականի հոկտեմբերի 7-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍՊԱՐՏԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66907118) տալ «ՀՀ Լոռու մարզ ք. Սպիտակ Երևանյան խճուղի 42 ավտոտեխսպասարկման կետ» հասցեում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվություն՝ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1211

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԱՐԴՈՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» ՄՐՑԱՇԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքում կազմակերպել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԱՐԴՈՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» մրցաշարը:
2. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԱՐԴՈՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» մրցաշարի անցկացման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1212

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» ՄՐՑԱՇԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքում կազմակերպել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026»մրցաշարը:

2. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» մրցաշարի անցկացման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2026թ. № 1213

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇԱՇԿՈՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» ՄՐՑԱՇԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքում կազմակերպել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇԱՇԿՈՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» մրցաշարը:

2. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇԱՇԿՈՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ-2026» մրցաշարի անցկացման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 1214

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 16-ին անցկացվող կրկնակի մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով հանձնաժողովի քարտուղար նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Թագուհի Շուշանյանին:

3. Աշխատակազմի ղեկավար Ազգանուշ Ֆրանգյանին՝ ապահովել սույն որոշման մասին մրցութային հանձնաժողովի անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՄԱՐԹՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1214 որոշման

ԿԱԶՄ
«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

h/h	անունը, ազգանունը	հաստատությունը (մարմինը)	պաշտոնը
1	Մարինե Նահապետյան	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
2	Գալուստ Մելիքսեթյան	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ
3	Ռաֆայել Սիմոնյան	Սպիտակ համայնքի ավագանի	Սպիտակ համայնքի ավագանու անդամ
4	Ազգանուշ Ֆրանգյան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար
5	Արթուր Քոչարյան	«Սպիտակի թիվ 5 դպրոց» ՊՈԱԿ	«Սպիտակի թիվ 5 դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 1215

ՄԱՐԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 70-րդ կետի 2-րդ ենթակետով, ուսումնասիրելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 13-ին անցկացված մրցույթի մասնակիցներից Մարինե Գալստյանի կողմից ներկայացված գրավոր բողոքը՝ Մարինե Արզումանի Գալստյանի մրցույթի արդյունքների մասով, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 13-ին անցկացված մրցույթի փաստաթղթերը, լսելով մրցույթի ձայնագրությունները, բողոքի քննարկման ժամանակ հանձնաժողովի անդամներին տրված հարցերի պատասխանները և Մարինե Գալստյանի կարծիքը, գտնում եմ, որ հարցատոմսի 5 հարցերից 3-ին տրվել է ճիշտ պատասխան, ինչը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 59-րդ կետի համաձայն, համարվում է հարցազրույցի փուլը հաղթահարած՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ արևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնն զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 13-ին անցկացված մրցույթի մասնակից Մարինե Գալստյանի բողոքը և նրան ճանաչել հաղթող:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մ. Գալստյանին որոշման մասին իրազեկելու հաջորդ օրվանից:

3.Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնին՝ պատշաճ կարգով իրազեկել Մարինե Գալստյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
ք.Սպիտակ